

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ  
Գ. Խաչատրյան

22 սեպտեմբեր 2011 թ. N 40

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 40**

**ՆԵՐԴՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ԿԱՄ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ  
ՀԱՇՎԵԳՐՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, սվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար»:

Օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ ենթակետի համաձայն ԱԱՀ-ից ազատվում են, մասնավորապես, բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունները և վարկային կազմակերպությունների կողմից ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունումը, բանկային և ինվեստիցիոն հաշիվների բացումը, վարումը ու սպասարկումը, այդ թվում նաև վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը.

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

Ներդրված ավանդի կամ բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսները չեն համարվում որպես ծառայության դիմաց հատուցում, ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն չեն առաջացնում և Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմի հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվում: